



Փ աշխկանը, անխոս, չունի նման բան անելու իրավունք, բայց եթե մարդիկ դատարանում չեն վիճարկում, եթե չեն պայքարում իրենց իրավունքների համար, ի՞նչ է մեղավոր: Այ, եթե մեկը-երկուսը դատարանում վիճարկեն, երրորդ դեպքը չի կրկնվի: Ցանկացած ապօրինի քայլ պետք է դատարանում վիճարկել, այդպես են հասնում արդարության:

Կարդացե՛ք էջ 4



Մ արտի վերջին երեւան էին ժամանել ամերիկացի եւ եվրոպացի լրագրողներ: Այս մեղիա տուրին, պարզվում է, մասնակցել է նաեւ ազգությամբ թուրք մի լրագրող՝ թուրքական եւ ամերիկյան շրջանակներին հայտնի լրագրող Բարչին Յինանչը, որը, վերադառնալով իր երկիր, հրապարակում է արել նախընտրական Յայաստանում տիրող իրավիճակի մասին:

Կարդացե՛ք էջ 6



Ք այերն իրենց պատմական հայրենիքում ոսկորի պես խրված են նրանց կոկորդում, նրանք ուզում են մեզնից ազատվել: Ի՞նչ խաղաղության պայմանագիր, ի՞նչ հաշտություն: Եղ ովքեր են խաղաղություն կնքողները: 2 արկածախնդիր կառավարիչներ՝ Յայաստանից եւ Ադրբեյջանից: Դուք հայ ժողովրդի ճակատագիրն եք որոշում, դուք ովքեր եք:

Կարդացե՛ք էջ 7

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am



ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 75 (4210), 13 մայիս, չորեքշաբթի, 2026



www.hraparak.am

Իրադարան

Ի նչպես նախորդ, այս ընտրություններում էլ մեծ թվով մարդիկ են մասնակցել ԿԸՅ դասընթացներին, որոնց արդյունքում համապատասխան հավաստագրեր են ստանում, որպեսզի մասնակցեն ընտրական հանձնաժողովների աշխատանքներին: Մեր տեղեկություններով, այս գործընթացն էլ ԶԴ-ի ուշադրությունից դուրս չի մնացել, որն իշխանափոխությունը կանխելու համար աննախադեպ հնարամտություններ է բացահայտում: Ըստ այդմ, ԶԴ-ն «բացահայտել» է հանձնաժողովների ընդդիմադիր անդամներին եւ երրորդ անձանց միջոցով նրանց հետ «աշխատանքներ տարել»՝ փորձել է համոզել, որ չմասնակցեն ընտրություններին: Գաղտնիք չէ, որ ընդդիմադիր ուժերն ակնկալում են, որ հանձնաժողովներում իրենց անդամների միջոցով պետք է ընտրատեղամասերում վերահսկողություն հաստատեն, որպեսզի կեղծիքներ չարվեն: Հիմա փորձում են այդ վերահսկողությունը նվազեցնել: Հարց է ծագում. եթե ընտրությունները կեղծելու ծրագիր չունեն, ինչո՞ւ են չեզոքացնում հանձնաժողովների ընդդիմադիր անդամներին: Ի դեպ, հանձնաժողովի անդամներն այդ աշխատանքի համար պետական բյուջեից վարձատրվում են: Այս տարի այդ գումարը հանձնաժողովի նախագահի համար կազմելու է 150 հազար դրամ, հանձնաժողովի անդամի համար՝ 75 հազար: Մեր տեղեկություններով, փորձում են ընդդիմության քվտավորված անդամներին ֆինանսապես շահագրգռել, որ հրաժարվեն ընտրությունների ժամանակ աշխատելուց, ընդդիմադիրները չկարողանան «փակել» ընտրատեղամասերը, եւ իշխանությունն իր սեւ գործն անի:



Աննախադեպ ընտրություն

Այսպիսի անհավասար ու անարդար ընտրապայքար, գոնե նախընտրական քարոզչության փուլում, Յայաստանում թերեւս երբեք չի եղել: Ես չեմ հիշում, որ երկրի համար կարեւոր ընտրությունների ժամանակ ընդդիմության լիդերներից որեւէ մեկը կալանավորված լիներ, քարոզարշավ անելու հնարավորություն չունենար, ինչպես չունի Սամվել Կարապետյանը: Ես նաեւ չեմ հիշում, որ երբեւէ իշխանությունն այսպիսի սեւ քարոզարշավ իրականացներ իր մրցակիցների նկատմամբ՝ կեղծիքներ ու զրպարտություններ, հայիոյանք ու լուտանքներ տեղալով ընդդիմադիր թեկնածուների հասցեին: Չեմ հիշում նաեւ, որ իշխանությունը երբեւէ նման շանտաժի մեթոդներ կիրառեր՝ սպառնալով հանրությանը, որ եթե ես երրորդ անգամ չընտրվեմ, աշխարհի պտույտը կանց կառնի, հրաբուխ ու երկրաշարժ կլինեն, պետություն գոյություն չի ունենա: Չեմ հիշում նաեւ, որ քաղաքական ասպարեզում ակտիվ դերակատարում ունեցող, նախընտրական շտաբներում աշխատող, իրենց քննադատող մարդկանց նկատմամբ այսպես դաժանաբար կիրառեին Զրեական օրենսգիրքը՝ կալանքներ, ձերբակալություններ, գաղտնախուսման: Երեկ էլ մի քաղաքացու, որը լայվ էր մտել ու Փաշինյանին հրավիրել Շենգենի, իշխանական «ենիչերիները», ձեռքերը ոլորելով, բերման ենթարկեցին, իբրեւ թե թշնամանքի ու ատելության խոսք տարածելու համար: Թեւե մենք՝ բոլորս, շատ լավ գիտենք, թե ով է մեր երկրում թշնամանք ու ատելություն տարածում, խտրականություն ու անհանդուրժողականություն կիրառում, բայց նրա նկատմամբ Զրեական օրենսգիրքը չի գործում, ոստիկանությունն ու դատախազությունը հենց նրա հրահանգով են իր մրցակիցներին ու իրեն քննադատողներին մեկուսացնում, չեզոքացնում: Չեմ հիշում նաեւ, որ պետության ղեկավարը, բանուգործը թողած, 24 ժամ քարոզչություն աներ՝ պետական ռեսուրսներն օգտագործելով:



Տեղեկացանք, որ Հանրային հեռուստաընկերությունը ցանկանում է հունիսի 1-5-ը վարձակալել Մարզահամերգային համալիրի դահլիճներից մեկը. մտադիր են այստեղ կազմակերպել օրենքով սահմանված նախընտրական բանավեճերը: Ընդ որում, քննարկվում է, որ բանավեճեր անցկացնելու են ոչ միայն 19 քաղաքական ուժերի առաջին համարների մասնակցությամբ, այլ նաեւ՝ տարբեր ոլորտների շուրջ ու անգամ կին թեկնածուների միջեւ: Մեզ հետ գրույցում Մարզահամերգային համալիրի տնօրեն Կարեն Ղազարյանը հայտնեց, որ այս պահին Հանրային հեռուստաընկերության հետ բանակցություններ են գնում, դեռ վերջնական որոշում եւ կնքված պայմանագիր չկան, սակայն հարցը քննարկումների փուլում է:

«ԽԱՂԵՐ ՏՎՈՂՆԵՐԻՆ» ՊԱՏԾԵԼՈՒ Է

Սյունիքի մարզում քարոզարշավի մասնակցած Նիկոլ Փաշինյանին դիմավորած եւ նրա առջեւ խոնարհված Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանը, որը հերթական անգամ արժանացավ հանրության պարսավանքին, ասում են՝ ԶԴ-ի համար այլեւս ընկալվում է որպես «ճշտի համակիր», որն այլեւս չի թաքցնում իր դիրքորոշումը, ի տարբերություն Զաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանի, որի «խաղերը» դուր չեն գալիս Փաշինյանին, չնայած Փարամազյանն էլ պակաս ջանքեր չի դնում, որ ԶԴ-ի հետ ջերմ հարաբերությունները պահի: Ընդհատ է՝ նա չէր դիմավորել Նիկոլ Փաշինյանին՝ Զաջարան

այցի ժամանակ, բայց, ասում են՝ այցից առաջ անձամբ «բացատրություն» է տվել Ալեն Սիմոնյանին, թե շատ հարգում է թե՛ նրան, թե՛ մարզպետին, թե՛ վարչապետին, բայց քանի որ վարչապետի այցը պաշտոնական չէ, ինքն էլ առողջական խնդիրներ ունի, չի կարող դիմավորել նրան: Խնդրել է, որ դրա տակ այլ ենթատեքստ չտեսնեն: Սակայն համայնքապետի բացատրությունը չի բավարարել իշխանական վերնախավին, նրանք բոլորից անվերապահ ծառայություններ են ակնկալում, եւ նման «տինտիրոտները» նրանց գայրացնում են: Ասել են՝ եթե վերընտրվենք, հիմնովին զբաղվելու ենք ընդդիմության հետ խաղեր տվողներով:

Ք Պ-ում լայվի «մարաթոն» է հայտարարված: Բոլորը մրցում են, թե օրվա ընթացքում ով ավելի շատ լայվ կմտնի ու ցույց կտա իր կատարած քարոզչական աշխատանքները: Նիկոլ Փաշինյանն ինքն է որոշում, թե ովքեր իր հետ շրջեն Երեւանի համայնքներով ու մարզերով, բայց դա չի նշանակում, թե մյուսները կարող են «դիվանի պառկել» ու սպասել հունիսի 7-ին: Չգուշացրել է. ով որտեղ կարող է, պետք է քարոզարշավ անի, ինքը բոլորի աշխատանքը տեսնելու է ու ըստ այդմ գնահատելու է ընտրություններից հետո: Թերեւս, սրանով է պայմանավորված, որ ԶԴ-ական մարզպետները, համայնքապետերն ու պատգամավորները, անգամ նրանք, ովքեր անցողիկ տեղերում չեն, կաշվից դուրս են գալիս՝ առավոտ, լույսը չբացված, լայվ են մտնում, ցույց տալիս, թե ինչ հերոսական քարոզարշավ են անում իրենց համայնքներում: Մեզ ասացին, որ տեսանյութերն էլ ուղարկում են ԶԴ-ի նախընտրական չաթ՝ որպես ապացույց:



«Յրապարակի» գրուցակիցն արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Մարտիրոսյանն է:



- ՌԴ նախագահը Յայաստանին օրեր առաջ ուղտիմատում ներկայացրեց, թե ժամանակն է հստակ որոշում կայացնելու՝ ԵՄ, թե՛ ԵԱՏՄ: Նույնիսկ առաջարկեց այդ հարցը որոշել հանրաքվեով, որ ժողովրդի տեսակետը պարզ դառնա: Նաեւ մինչեւ մայիսի 28-ը ժամանակ տվեց, որպեսզի ԶԳ իշխանությունները կոնկրետություն մտցնեն այս հարցով: Ինչ էք կարծում՝ ինչի հենց այս փուլում ՌԴ-ն որոշեց այս քայլին գնալ:

- Ես դա չեմ ընկալում որպես ուղտիմատում, առավել եւս՝ չեմ կարծում, որ կսահմանվի վերջնաժամկետ: Չեմ բացառում, որ սա Պուտինի կողմից էքսպրոմտ էր եւ ոչ թե արդեն իսկ մշակված քաղաքականության դրսեւորում: Ամեն դեպքում, այս հայտարարությունը ես որպես ուղտիմատում չեի դիտարկի, առավել եւս՝ Աստանայում կայանալիք գազախաղաղության համաձայնագրի:

- Բայց Յայաստանի իշխանությունները, ակնհայտորեն, մի քանի լարի վրա են փորձում խա-

վանենք՝ այս խաղը նոր չի սկսվել, պարզապես ստեղծված աշխարհաքաղաքական պայմաններում Մոսկվան ավելի սուր է այն ընկալում եւ դրա մասին արտահայտվում: Յայաստանն ավանդաբար ձգտել է համարել իր արտաքին քաղաքականության արեւմտյան եւ հյուսիսային վեկտորները: Խնդիրն այժմ բարդացել է. ծայրահեղ լարվել են ՌԴ-Արեւմուտք հարաբերությունները, եւ այդ պատճառով էլ փոխվել են ՌԴ-ի մոտեցումները եւ հռետորաբանությունը: Նախկինում քննարկումներ էինք ունենում ռուսական կողմի հետ, ինչը բացարձակ չի նշանակում, որ համաձայնեցնում էինք մեր քայլերը: Օրինակ՝ 1999 թվականին Գործընկերության եւ համագործակցության համաձայնագիր կնքվեց ԵՄ-ի հետ, եւ մենք ռուսական կողմի հետ քննարկեցինք այդ հարցը ստորագրելուց առաջ, բայց նորից եմ ասում՝ մենք չենք գնացել ռուսներից թույլտվություն խնդրելու, պարզապես, որպես ռազմավարական գործընկերներ, կոնսուլտացիա-

շուտ, ԵՄ թե ԵԱՏՄ հարցը դրվելու էր ռուսների, ինչպես նաեւ՝ եվրոպացիների կողմից, եւ դրա մասին վաղուց է խոսվում: Ռուսաստանի համար դժվար է հանդուրժել, որ մեր տնտեսական ներուժն աճի իր հաշվին՝ իր օրբիտայից դուրս գալու եւ իր համար թշնամի կառույցի օրբիտա տեղափոխվելու նպատակով: ՌԴ-ի համար սա ֆունդամենտալ խնդիր է: Պուտինը տեսնում է, որ Յայաստանի տնտեսությունն արձանագրում է աճ՝ 6 տոկոս, մի քիչ՝ ավել, մի քիչ՝ պակաս: Աճը պայմանավորված է նաեւ ռուսական գործոնով, հատկապես՝ ռուսական գազի արտոնյալ գնով եւ ռուսական շուկայի մատչելիությամբ: Ուստի, ռուսները պարբերաբար հիշեցնում են ԵՄ եւ ԵԱՏՄ ռեժիմների անհամատեղելիության մասին: Այս ֆոնին, Յայաստանի կառավարությունը հայտարարում է, որ ԵԱՏՄ-ից այս պահին դուրս գալու խնդիր չունի:

Արցախի հանձնումից եւ հայ-արգրեջանական երկխոսության մեկնարկից հետո, երբ միջնորդական հիմնական դերակատարումը Մոսկվայից տեղափոխվեց Բրյուսել եւ Վաշինգտոն, Յայաստանի համար Ռուսաստանի հետ հարաբերություններում մասնւրէիւ հնարավորությունները, քնականաբար, մեծացան: Խնդրահարույց է այն, որ այդ ֆոնին կտրուկ եւ ոչ տեղին վատթարացավ Երեւանի եւ Մոսկվայի միջեւ ռազմավարական հաղորդակցությունը: Ակնհայտ է, որ համապատասխան հռետորաբանությունն այսօր գնահատվում են փոխհատուցվում է ԵՄ-ի կողմից: Այս համատեքստում Յայաստանի կառավարությունն անում է քայլեր, որոնք թեեւ, ըստ Եւրոպան, հաճախ խորհրդանշական են, սակայն ընկալվում են որպես հակառուսական: Մինչդեռ, փաստացի քաղաքականությունը, առավել եւս՝ ԵԱՏՄ-ի

շրջանակում, դեռեւս պայմանավորված է ռուսական գործոնով եւ Ռուսաստանի ազդեցությամբ եւ ոչ թե գաղափարական կամ արժեքային ընտրությամբ:

- Վոլոդիմիր Չելենսկին Երեւանում ՌԴ-ին բացահայտ սպառնալիքներ հղեց: Տեսակետ կա, որ նման հայտարարություններն են ռուսական կողմին գրգռել:

- Ակնհայտ է, որ Չելենսկու ելույթը ռուսներին դուր չէր գալու: Ես ԶԳ կառավարությանը չեմ պաշտպանում, սակայն չեմ կարծում, որ հնարավոր էր Չելենսկու ելույթը մեզ հետ համաձայնեցնել: Վստահ եմ, որ Չելենսկին այդ քայլն արեց միտումնավոր՝ Յայաստանի եւ Ռուսաստանի միջեւ լարվածությունն ավելացնելու նպատակով:

- Ինչ է ստացվում. եթե ռուսական կողմը Յայաստանին ուղտիմատում չի ներկայացնում, ապա կրկին թույլ է տալու, որ Փաշինյանը շարունակվի լարախաղաղությունը:

- Կա ԵԱՏՄ, կա կազմակերպության կանոնադրություն, եւ բոլոր նորմատիվ ակտերն ընդունվում են ընդհանուր համաձայնությամբ, եւ ես կարծում եմ, որ մոտ ապագայում ԶԳ կառավարությունը դուրս չի գա ԵԱՏՄ-ից. որքան որ հաջողվի, ԵԱՏՄ-ի ներուժը Յայաստանն օգտագործելու է: Կատնադրությամբ էլ նախատեսված չէ, որ ԵԱՏՄ մեկ անգամ կարող է պահանջել մեկ այլ անդամի հեռացումն այդ կառույցից, քանի դեռ վերջինս չի ընդունել այնպիսի ազգային կարգավորումներ, որոնք անհամատեղելի են ԵԱՏՄ կանոնակարգերին: Ինչ վերաբերում է շերմուկին, կոնյակին եւ այլ պարենային արտադրանքի հետ կապված խնդիրներին, դրանք եւս եղել են նախկինում, նոր քան չէ: Գործարարները միշտ պետք է ձգտեն դիվերսիֆիկացնել իրենց շուկաները:

ՎՍՏԱՎ ԵՄ, ԳԵՆԵՆՍԿԻՆ ԴԱ ԱՐԵՅ ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ՝ ՎԱՅՈՒՄԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՇԱՅՆԵԼՈՒ ՎԱՄԱՐ

դալ: Փաշինյանը ձգտում է մնալ ռուսական ազդեցության գոտում, մինչև նույն ժամանակ Արեւմուտքի հետ է, Երեւանում Եվրոպական քաղաքական համայնքի գազաթնաժողով է տեղի ունենում, հակառուսական հայտարարություններ են հնչում եւ այլն:

- Շատ ռուս փորձագետներ եւս ընդունում են, որ Յայաստանին մինչ այս պահը հաջողվում է խաղալ երկու լարի վրա: Կան տարբեր պատճառներ, որոնք կարելի է երկար քննարկել: Եկեք մի քան խոստո-

ներ ենք ունեցել: Ի դեպ, եթե նախկինում ռուսական կողմը կտրուկ բացասաբար էր վերաբերվում ԱՊԶ երկրների համագործակցությանը ՆԱՏՕ-ի հետ, այժմ ռուսները չեն թաքցնում, որ ԵՄ-ն իրենց համար դարձել է շատ ավելի վտանգավոր, քան՝ ՆԱՏՕ-ն: Ռուսաստանը, ենթադրաբար, չի կարող չարձագանքել այս ամենին, սակայն ուղտիմատում եւս դեռ չեմ տեսնում: Այն, ինչ տեղի է ունենում, նախկինում արված հայտարարությունների սուր մեկնաբանություններն են: Ուշ թե

ԵՐԵՎԱՆԸ ԲՊ Ե ՄԵՐԺՈՒՄ



Քարոզարշավի 5-րդ օրը Նիկոլ Փաշինյանը որոշեց քայլարշավը շարունակել Երեւանի Շենգավիթ վարչական շրջանի փողոցներով: Զավանաբար, նկատի ունենալով նախորդ օրվա տխուր պատկերը, թե ինչպես էին Երեւանի համայնքում քաղաքացիները համատարած մերժում իրեն, քննադատում Արցախի, Յայաստանի սուվերեն տարածքների կորստի եւ զոհերի համար, երեկ Փաշինյանը խուսափում էր անձամբ մոտենալ քաղաքացիներին, զրուցել նրանց հետ:

Իրեն էին մոտենում, հիմնականում՝ իր երկրպագուները, սիրո եւ հավատարմության խոստովանություն անում, իսկ ինքն ուղղակի քայլում էր փողոցներով, մտնում բակեր, որտեղ նախապես սպասում էր ԶՊ երիտասարդների խումբը՝ «Նիկոլ վարչապետ» վանկարկելով եւ ծափահարելով: Փաշինյանը բարձրաձայն երգում էր պիկապի վրա, խոսում իրենց բարեփոխումներից՝ թոշակների բարձրացում, առողջապահության ապահովագրություն, 9-ամսյա խաղաղություն, եւ հորդորում ներկաներին՝ իր հետ շրջող խմբին, տեր կանգնել այդ խաղաղությանը: Եվ չնայած այս ակնհայտ բեմադրված տեսարաններին, ԶՊ առաջնորդի քայլարշավը մայրաքաղաքի փո-

ղոցներով երեկ էլ առանց տիաճ միջադեպերի չանցավ. քայլերթի սկզբում Փաշինյանը փորձեց մեկ երկուսին մոտենալ՝ Յայաստանի փոքրացած քարտեզ-կրծքանշանը հանձնելու, սակայն քաղաքացիները կտրուկ հրաժարվեցին, մի պապիկ անգամ չցանկացավ բարեւել նրան: «Եսբանից հետո ինչ բարեւ», - ասաց նա:

Մի տղամարդու՝ Փաշինյանին դավաճան անվանելու համար, ձեռնաշղթաներով հեռացրին տարածքից: Պակաս վրդովված չէր մեկ ուրիշ տղամարդ, որ մոտեցավ Փաշինյանին ու հիշեցրեց, որ երբ 2018-ին նրան ձերբակալում էին, այդ ժամանակ իր ձեռքը կտրել էն, սակայն, չնայած դրան, նա շարունակել է մասնակցել ակցիաներին, որովհետեւ հավատացել է, որ պետք է այդ օրվա իշխանությունը հեռանա: «Յիմա էլ վստահ եմ, որ Դուք պետք է հեռանաք: Գիտեմ, շատերին հաճելի չի լինի, բայց Դուք հանձնել եք Արցախը, Դուք 5 հազար տղաների մահվան առիթ էք դարձել», - դիմելով Փաշինյանին՝ ասաց երիտասարդը: 5 հազար թիվը լսելով՝ Փաշինյանը, բառի բուն իմաստով, կորցրեց ինքնատիրապետումը, կառչեց այդ թվից ու սկսեց բղավել, թե որտեղից էք վերցրել 5 հազար թիվը: Տղամարդը հանդարտ շարունակեց, որ խնդիրը թվի մեջ չէ, որ Փաշինյանն է զոհերի եւ Արցախի

կորստի պատասխանատուն: «Եթե 15 տարի առաջ այս ամենի մասին այսպես խոսեիք, Ձեզ զուգարանում գնկելու էին՝ սպանելին, այ, հենց սրա համար ենք ասում, որ հիմա պետություն ունենք, մենք Արցախը չենք կորցրել, Յայաստանն ենք գտել», - իր հիմար թեզը կրկնեց նա: Սրան ի պատասխան, Երեւանիում, օրինակ, մի կին վերցրեց Նիկոլ Փաշինյանի ձեռքից քարտեզը, հետո վերադարձրեց՝ այնտեղ չկան Արցախը, Ամարասը:

Որքան ավելի սիրալիր էր իրեն գովերգողների հանդեպ, նույնքան ագրեսիվ էր նրանց նկատմամբ, ովքեր իրենց խնդիրներով էին մոտենում կամ քննադատություն էին հնչեցնում: Փաշինյանը կամ թույլ չէր տալիս երկար խոսել, ասում էր, որ շտապում է, կամ լսում ու արագ հեռանում էր: Մի կին փորձում էր անհետ կորած ամուսնու եւ պետական գերատեսչությունների 6-ամյա անգործության մասին խոսել, բայց Փաշինյանը խորամանկորեն կանխեց. «Միակ բանը, որ կարող եմ անել, ներողություն խնդրելն է»: Մի տղամարդ էլ դժգոհեց, որ փողոցային առեւտրի համար 400 հազար տուգանել են, ու հիմա ինքը հաց վաստակելու խնդրի առջեւ է կանգնած: «Ապօրինի ձկան վաճառքով մի զբաղվի, որ չտուգանեն», - խորհուրդ տվեց Փաշինյանը: Գույքա-հարկը տասնապատկելու մասին էլ

բողոքին հակադարձեց, թե տների գներն էլ են բարձրացել:

Բնականաբար, սպառնաց ու զագրախոսեց քաղաքական հակառակորդների, հատկապես Ծառուկյանի հասցեին. «Ծառուկյան Գագիկ, լեզուդ շատ է երկարել, մինչև նույն է՝ լակոտիդ չես կարող փրկել»: Փոխարենն անկաշկանդ ու երկար շփվում էր երեխաների հետ, լուսանկարվում, քաղցրավենիք ու քարտեզ բաժանում: Թեեւ նրան ուղեկցում էին մի քանի տասնյակ ԶՊ-ականներ, բայց քարտեզ, բուկլետ ու թխվածքաբլիթ բաժանում էր Փաշինյանը: Խրախուսում էր երեխաների ներկայությունը քարոզարշավին: Դպրոցահասակ տղաներին տեսնելով, ասաց՝ ուրախ է, որ դպրոցականները վերջին դասից փախել, եկել են իր քարոզարշավին, կատակեց. միայն տնօրենը զգա՝ իրենից հաշիվ պահանջի: «Երեկ, առավոտվա 10-ից մինչեւ երեկոյան 6-ը քարոզարշավ եմ արել, բայց չեմ հոգնել, որովհետեւ վայելել եմ ժողովրդի սերը, հատկապես երեխաների ներկայությունն է ինձ ուժ տալիս», - ասաց նա:

Քարոզարշավի ողջ ընթացքում Փաշինյանին ուղեկցում էին ՊՊԾ տասնյակ աշխատակիցներ, ոստիկանության Շենգավիթի բաժնի պետը: Մաշտոցի պողոտայով նրա շարասյունն անցնելիս մենք հաշվեցինք՝ 18 ավտոմեքենա եւ սրտիկներով 2 ավտոբուս:

Մեխը չի կարելի մոցնել «շնեյտելի» մեջ

Մայիսի 11-ին հշեւան քաղաքի մշակույթի տանը բնակիչների հետ հանդիպման ժամանակ Ռոբերտ Զոհարյանը պատմել է իր մանկությունից մի դեպք, երբ, լինելով փոքր երեխա, մեխ է գտել եւ, չիմանալով ինչ անել այն, մտքով է իրենց տան վարդակի (շտեպսեյի) մեջ ու էլեկտրական հոսանքի այնպիսի հարված է ստացել, որ աչքերը փայլատակել են: Զոհարյանն ասել է, որ այդ հարվածը մինչեւ հիմա հիշում է, եւ հավելել է, որ Նիկոլ Փաշինյանը, մեխը ձեռքին, այն մտնում է տարբեր «շտեպսեյների» մեջ, սակայն ստացած հարվածներից, ցավոք, ոչ թե ինքն է տուժում, այլ՝ Հայաստանի ժողովուրդը:

«Երատո» ջոկատի նախկին անդամ Արսիսե Մինասյանը, որը խիստ բնասողատու է իշխանություններին, սոցցանցերում բավականին ակտիվ գործունեություն է ծավալում ուղիղ եթերներ, ստատուսներ, եւ բավականին մեծ լսարան է հավաքել՝ ամսական մոտ 5 միլիոն դիտում ունի: Մենք Արսիսեին հարցրինք՝ ի՞նչ է այս ակտիվության նպատակը, ի՞նչն է ստիպել, որ իր բիզնեսին զուգահեռ նաեւ նման հանրային գործունեությամբ զբաղվի:

- Նախ, ուզում եմ մեր գրույցը սկսել այնտեղից, որ ես ոչ մի կուսակցության եւ որեւէ քաղաքական ուժի կողմից չեմ ֆինանսավորվում, ես երբեք որեւէ կուսակցության անդամ չեմ եղել, սակայն քանի որ ինձ մտահոգում է մեր երկրի ապագան, ես նույնիսկ չեմ ուզում մտածել, թե ինչ կարող է տեղի ունենալ, եթե այս անգամ եւս Նիկոլ Փաշինյանն ընտրություններում հաղթի: Այդ է պատճառը, որ ես իմ օրվա մեծ մասը տրամադրում եմ մարդկանց՝ գրեթե 24 ժամ բացատրում եմ, համոզում եմ, թե ինչու չի կարելի ընտրել Նիկոլ Փաշինյանին: Ես մարդկանց եմ գտնում, ովքեր սատարում են Նիկոլ Փաշինյանին, նրանց հետ զրուցում եմ, փորձում եմ հասկանալ, թե ինչն է պատճառը՝ այդ ինչ է արել Փաշինյանը, որ նրան ցանկանում են երրորդ անգամ քվե տալ: Բազմաթիվ կոչերով դիմել եմ Ազգային ժողովի պատգամավորներին, երբեմն միայն Վահագն Ալեքսանյանն է արձագանքել ինձ՝ մեկնաբանությունների տեսքով, սակայն երբ ես իրեն տեսանյութի միջոցով ուղերձ եմ հղել, այլևս չի արձագանքել ինձ: Հետաքրքիր դասընթաց եմ սկսել. «դասընթաց» գոմբիների համար»: Համացանցում կեղծ էջերով շատ են տարբեր մարդկանց թիրախավորում, հատկապես՝ ընդդիմադիր հայացքներ ունեցողներին, ես փորձում եմ բացահայտել, թե նրանք ովքեր են եւ ինչու են նման քայլերի դիմում: Կրթված

մարդկանց համար դասընթացը բավականին զավեշտական է, իսկ քիչ կրթված ու ոչ արդիվատ մարդկանց համար «նյարդերի դեղ» հաղորդումներ եմ տեղադրում, եւ մեր հաղորդումների շեմը ֆեյսբուքյան հարթակում շաբաթական հասնում է 4 միլիոնի: Ես այժմ նոր նախաձեռնություն եմ սկսել՝ «Ոչ Նիկոլին», «Ոչ ԶԳ-ին», «Այո» այն ընդդիմադիր ուժերին, ովքեր հատելու են 5 տոկոսի շեմը՝ ըստ վիճակագրական տվյալների:

- Ինչը հիասթափեցրեց Ձեզ, որ որոշեցիք անջատվել «Երատո» ջոկատից: Ինչպե՞ս ստացվեց, որ ոչ միայն ջոկատի հետ կապերը խզեցիք, այլևս պայթար սկսեցիք ջոկատի հրամանատարի ամուսնու դեմ:

- Շատ հետաքրքիր հարց է: Չոկատի հետ կապը խզված չէ: Չոկատի անդամներից մի քանիսի հետ հավաքվում եմ, զրուցում եմ, ունենք ջերմ հարաբերություններ, կապեր, իհարկե՝ փոքր մասի հետ: Աննա Հակոբյանը՝ որպես ջոկատի հրամանատար, առաջին իսկ օրվանից գիտեր, որ ես ունեմ ընդդիմադիր հայացքներ, ես երբեք չեմ եղել իշխանական,

կայն չարեց, որովհետեւ իրեն դավաճան կասեին: Ինձ այդ հայտարարությունը խիստ տրամադրեց նրա դեմ: Աննա Հակոբյանի հետ ես երբեք խնդիր չեմ ունեցել ու չունեմ: Եթե ինչ-որ մի իրավիճակ լինի, որ մենք համատեղ պայքարենք ինչ-որ մի երեւույթի դեմ, գուցե ես նորից միանամ նրան: Մենք միասին հաց ենք կիսել, ճանապարհ ենք անցել, եւ ես ոչ մի խնդիր չունեմ նրա հետ:

- Բավականին մեծ լսարան եք հավաքել: Ինչ է կարծում ազդեցություն թողնում են Ձեր եթերները լսարանի վրա:


- Իմ առաջին խնդիրը հայիոյանքը վերացնելն է, դա, կարծում եմ, ինձ մոտ ստացվում է: Եթե համեմատենք իմ առաջին դասը եւ 13-րդ դասը, ապա որակապես կա փոփոխություն: Խելացի մարդիկ դրանց հումորով են վերաբերվում, իսկ շատերի մոտ կարծիք է փոխվում: Ամեն դեպքում, եթե նայում են, լսում են, ուրեմն մարդկանց հետաքրքրում է, հակառակ դեպքում ուղղակի չէին նայի ինձ: Ես տեսնում եմ, որ ամեն օր իմ բանակը մեծանում է:

Գրեթե 24 ժամ բազմաթիվ-ՎԱՄՈԳՈՒՄ ԵՄ, Թե ԻՆՉՈՒ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԸՆՏՐԵԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

սակայն որպես ընդդիմադիր էլ չեմ եղել ազդեցիկ ու պայքարող: Ուղղակի ես չեմ ընկալել, թե բավարար կրթություն չունեցող, փաբերում պարտքեր ունեցող, հեռուստացույցի ապառիչը վճարել չկարողացող, փողոցից եկած մարդն ինչպես կարող է բարձր պաշտոններ զբաղեցնել: Իմ հայացքները մշտապես եղել են ընդդիմադիր, սակայն ոչ թշնամական: Թշնամական դարձավ այն պահից, երբ Փաշինյանն Ազգային ժողովից հայտարարեց, որ կարող էր կանգնեցնել պատերազմը, սա-

- Այս ընտրությունների մասնակիցների մեջ ունե՞ք ֆավորիտ թեկնածու: Ռոբերտ Զոհարյանի հետ Մասիսում կայացած հանդիպմանը, եթե չեմ սխալվում, մասնակցում էիք:

- Ունեմ իմ ֆավորիտը, սակայն եթե ես այդ մասին խոսեմ, կստացվի, որ հստակ քաղաքական շեշտադրումներ են անում: Օգտվելով քվեարկության գաղտնիությունից՝ ես դա կանեմ գաղտնի եւ ինչ-որ կոչեր չեմ անի, որպեսզի ընդդիմադիր ինչ-որ մի ուժի չվնասեմ:



Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Ցավոք, նորանկախ Հայաստանի պատմության հենց սկզբից՝ 1995-ից, մեր իրականության մեջ ներդրվեցին ընտրակեղծարարության հիմքերը՝ տարբեր գործիքներով ու տեխնոլոգիաներով հանդերձ: Մի ժամանակ արկղերն էին լցունում, մեկ ձայնը 5-10 հազար դրամով առնում, հիմա հոգեբանական տեռոր, շանտաժ են կիրառում, ադմինիստրատիվ լծակներ, աշխատանքից են ազատում, ստիպում իշխանությունների վերարտադրությանը մասնակցել: Որպես կանոն, ընտրակեղծարարությունն իրականացնում է օրվա իշխանությունը:

Փոխվում են ժամանակները, տարիներն անցնում են, ընտրություններ կեղծելու ձեւերն ու մեթոդներն են փոխվում, սակայն նպատակն ու եռությունը չի փոխվում՝ ամեն գնով, օրենքը տրորելով, Սահմանադրությունն ու բարոյականության նորմերը խախտելով՝ վերարտադրվել: Ահա՛ իշխանությունների ծրագիրը:

Ընդ որում, այն նույն ուժերը, որոնք, ընդդիմադիր լինելով, խոսում են բարձր արժեքներից, ժողովրդավարությունից, արդար ու թափանցիկ ընտրություններից, երբ գալիս են իշխանության, կիրառում են այն բոլոր հոռի գործիքները, որոնք կիրառում էին իրենց նախորդները, դեռ մի բան էլ ավելի: Նիկոլ Փաշինյանն ու նրա իշխանության ներկայացուցիչները երբ ընդդիմադիր էին, շատ էին բնասողատու

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ Ե ՎՎ-Ի ԱՐԱՏԱՎՈՐ ԲԱՐՔԵՐԸ

Սերժ Սարգսյանի եւ ՀՀԿ-ականների գործելաճոճը: Դա Փաշինյանի ամենասիրելի թեմաներից էր՝ Հայաստանում երբեք լեգիտիմ իշխանություն չի եղել, միշտ կեղծել են ընտրությունները, եւ հպարտանում էր, թե ինքը փակել է ընտրազեղծարարության էջը: Բայց այս 8 տարիներին մենք տեսանք, թե ինչ խայտառակ մեթոդներով է նա փորձում իշխանություն պահել:

Այն, որ դպրոցներն ու կրթական հաստատությունները նախկին իշխանությունները կուսակցականացրել էին, ամենուր տնօրեն էին նշանակվում ՀՀԿ-ականները, կամ՝ զինվորներին ստիպում էին շարքով կարգով մտնել ընտրատեղամաս եւ ՀՀԿ ընտրել, մարդկանց ստիպում էին նկարել իրենց քվեարկությունը՝ որպես ապացույց, եւ ներկայացնել փող տվողին կամ վերադասին, կարուսելներ էին կազմակերպում, կեղծ անձնագրեր տպում, քվեարկողների շրջիկ խմբեր ձեւավորում: Մեզ պատմեցին, որ միամիտ մարդկանց անգամ խաբել են, թե՛ տեսագրող սարք ենք տեղադրում ձեր հագուստի վրա՝ հետեւելու ենք, թե ինչպես եք քվեարկում, ապա մի սովորական հագուստի կոճակ են կարել ընտրողների շապիկներին, եւ մարդիկ վախեցած ընտրել են իշխանության ներկայացուցիչին: Հիմա գործի են դրվել բոլոր՝ եւ քրեական, եւ մանիպուլյատիվ, եւ ադմինիստրատիվ ու հոգեբանական լծակները:

Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի փորձագետ Վարուժան Հոկտանյանը, որը նախորդ իշխանությունների ժամանակ դիտորդական առաքելությամբ էր զբաղվում, «Հրապարակի» հետ զրույցում ասում է, որ լավ է հիշում, թե նախկիններն ինչ քայլերի էին դիմում. «Այն ժամանակ մենք ակախատե էինք լինում տարբեր ընտրակեղծիքների: Ընտրակաշառքներ, լցունումներ էին լինում հաստատապես, մարդկանց դրոշմ էին ընտրել իրենց: Վարչական ռեսուրսները չարաշահում էին, դպրոցների տնօրեններին սպառնում էին, որ եթե այսքան ձայն չապահովեք, աշխատանքից կհեռացվեք, եւ այլն: Ի դեպ, լինում էին դեպքեր, որ սպառնալիքը դառնում էր իրականություն, ազատում էին դպրոցի տնօրենների, սակայն նման դեպքեր քիչ էին լինում, որովհետեւ հիմնականում տնօրեններն ապահովում էին պահանջված ձայները: Եթե իքս ընտրատեղամասից իրենց հաշվարկով քիչ ձայներ էին ստանում, հաշվարկ էին անում ու տեսնում, որ իրենց քիչ են ընտրել: Ինչ վերաբերում է օրվա իշխանություններին, ես չեմ կարող որպես դիտորդ հստակ գնահատականներ տալ, քանի որ այլևս վաղուց չեմ զբաղվում դիտորդական առաքելությամբ»:

Մենք վերջին օրերին բազմաթիվ ահազանգեր ենք ստացել այն մասին, որ ԶԳ-ն ստիպում է տարբեր կառույցների ղեկավարներին՝

ցուցակներ կազմել եւ ներկայացնել իրենց, ցուցակագրված մարդկանց էլ ասել, որ անպայման պետք է ԶԳ-ին ընտրեն, հակառակ դեպքում կազատվեն աշխատանքից: Մարդիկ մի կողմից վախեցած են, կարծում են, թե կպարզվի, եթե ուրիշ ուժի ձայն տան, մյուս կողմից՝ չեն ուզում բացահայտ խոսել, որ աշխատատեղից չզրկվեն:

Մեր տեղեկություններով, օրինակ, Արթիկ խոշորացված համայնքում են ինտենսիվորեն ցուցակներ կազմում՝ դպրոցների, մանկապարտեզների, մարզադպրոցների, պետական այլ հաստատությունների ղեկավարներին համայնքապետարանը նման հրահանգ է իջեցրել: Յուրաքանչյուրը պետք է 6-10 հոգանոց ցուցակ ներկայացնի համայնքապետարան, որում նշված անձինք պարտադիր մասնակցելու են ընտրությանը եւ քվեարկելու են ԶԳ-ի օգտին: Համայնքապետարանից զգուշացրել են, որ եթե չքվեարկեն, ընտրությունների հետ հրաժեշտ կտան իրենց պաշտոններին, կարող է անգամ քրեական հետապնդում սկսեն նրանց նկատմամբ: Փորձեցինք կապ հաստատել Արթիկի համայնքապետ Անանիկ Ոսկանյանի հետ, սակայն նրա հեռախոսին պատասխանած անձն ասաց, որ համայնքապետի օգնականն է, իսկ համայնքապետն Արթիկի Լեռնակերտ բնակավայրում ակտիվ քարոզարշավ է անում:



Վարտան Հովհաննիսյան

ԳՊԿԵ

Մինչ Նիկոլ Փաշինյանը օրենքների եւ օրինապահության մասին ճառեր է ասում, դա չի խանգարում նրան՝ միաժամանակ տապալել սահմանադրական կարգը, խախտել օրենքները: Բայց մարդու իրավունքների ջատագով, օրենքները խիստ կարեւորող Արեւմուտքն աչք է փակում նրա բոլոր հակասահմանադրական քայլերի եւ գործողությունների վրա: Նիկոլ Փաշինյանին թվում է, թե ինքը սովետական ժամանակների դպրոցի տնօրեն է, իսկ քաղաքացիներն իր աշակերտներն են, այն էլ՝ բավականին բութ, եւ ինքը կարող է նրանց անկյուն կանգնեցնել, անհեթեթ ու կեղծ տեղեկատվություն փոխանցել, որոշել, թե ով որտեղ աշխատի, երբ ազատման դիմում գրի, հեռանա, եւ այլն: Նման դրսեւորումները, իհարկե, նոր չեն: Փաշինյանն առաջին անգամ այդ որակները բացահայտեց, երբ 2019-ի ապրիլի 10-ին այցելել էր ՆորազգաՎիթի ավտոմաքսատուն: Այնտեղ տեսնելով 33 դորձը գետնին դրված՝ նա ցուցադրական զայրույթ բեմադրեց այդ մասնաճյուղում գտնվող աշխատակցի նկատմամբ եւ կատաղության պահին հրահանգեց. «Աշխատավարձը կծախսես,



ՆՐԱՆ ՇԱՏ ՄԵՂԱԳՐԱՆՔՆԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ, ՍԱ ԿԱՐՈՂ Ե ՆՈՒՅՆԻՍԿ 50-Ի ՄԵՋ ՉԼԻՆԵԼ

դորձը կփոխես, կբերես կղնես գլխավերեւումդ, հետո դիմումդ կգրես, կգնաս տուն, լսեցի՞ր»: Ապա հրահանգներ իջեցրեց իրեն ուղեկցող ՊԵԿ փոխնախագահի՝ մաքսային գծով պատասխանատու Շուշանիկ Ներսիսյանին: «Ով աշխատել է այդ սենյակում, բոլորը հեռացվեն աշխատանքից, կզեկուցեք անձամբ ինձ... դրանց կանգնելու ձեռք, հազուկապը, ոնց որ քուզում լինեն: Լավ ա՛՛ չեն պագել: Ինչ կապ ունի, որ վարձակալած տարածք է: Որ գնում ենք վարձով տանն ապրելու, ասում ենք՝ ոչինչ, թող խոզանոց լինի», - հուլիսից դուրս էր եկել Փաշինյանը: Նկատելի, որ մաքսային շարքային աշխատողի վրա այսպես վրդովված վարչապետը կարծես թե չի վրդովվել,

որ նույն Շուշանիկ Ներսիսյանը 2022-ին ազատվեց պաշտոնից, հեռացավ ԱՄՆ, որտեղ, ըստ լուրերի, մեծ դրակ է գնել, բիզնես է հիմնել եւ ճոխ ապրում է Հայաստանից գողացված փողերով: Փաշինյանը մանր բաներից է վրդովվում ու թատերական տեսարաններ բեմադրում՝ բախում ընկած ծխախոտի «բիզնիս», Եժան ծորակից, բասկետբոլի խախուտ շիթից, քաղաքացու՝ ուղիղ չկանգնելուց, Ստեփան Չորյանի «Ցանկապատ» գործի մեկնաբանությունից: Իհարկե, նա կարող է ձեռնադրել «պեռաշկին» առանց անձեռնոցիկի ուտել, հետո ձեռքերը սրբել հագուստի վրա, կերած խաշլամայի ոսկորները դնել Պապիկյանի դիմաց, քաղաքացիներին սպառնալ ու բռնաբռնել՝ չարաշահելով վարչապետի կարգավիճակը եւ օգտվելով մարդկանց վախերից: Բայց դրանք մանրուքներ են այն անօրինակությունների համեմատ, որ նա թույլ է տալիս իրեն՝ հանձնարարելով մաքսավորին ազատել աշխատանքից, զինվորականին հանձնարարել, որ գործադրեն, աղջկա համար բարեխոսող մարդուն ասել՝ ես մարդու աղջկան մանկապարտեզի տնօրեն չնշանակեք, խախտելով Աշխատանքային

սկսեց կոպտել մարդուն, թե՛ զգաստ կանգնիր, հետո հրահանգեց պաշտպանության նախարարին՝ զորացրել նրան: «Պապիկյան, այդ զինվորականին զորացրիր, թող գնա, ինքն ի վիճակի չի ծառայության: Եթե զինվորական է, զորացրի, թող գնա, չգիտեմ ինչ ա օգտագործած, խմած ա, քաշած ա, ինչ ա, տենց զինվորներ մեր բանակին պետք չեն», - ասաց նա: Ինչ իրավունքով է Փաշինյանը ոչ աշխատանքային ժամին զինվորականին ստիպում զգաստ կանգնել, առավել եւս՝ հրամայում է նրան ազատել աշխատանքից: Գուցե այդ մարդն իր առողջությունը նվիրել է երկրին, գուցե վնասվածքներ է ստացել, առհասարակ, օրենքի դր կետով է Նիկոլ Փաշինյանը մանկապարտեզի տնօրեն նշանակում կամ զինվորական հեռացնում համակարգից:

«Հրապարակը» գրուցել է փաստաբան **Հայկ Ալումյանի** հետ: Նա, խոսելով Փաշինյանի հրահանգների մասին, նկատեց. «Նիկոլ Փաշինյանը, անխոս, չունի նման բան անելու իրավունք, բայց եթե մարդիկ դատարանում չեն վիճարկում, եթե չեն պայքարում իրենց իրավունքների համար, ի՞նչ է մեղավոր: Այ, եթե մեկը, երկուսը դատարանում վիճարկեն, երրորդ դեպքը չի կրկնվի: Ցանկացած ապօրինի բայլ պետք է դատարանում վիճարկել, այդպես են հասնում արդարության, այդպես է ստեղծվում իրավական պետությունը: Բոլոր երկրներում էլ երկրի ղեկավարները, եթե իմանան, որ քաղաքացին լեզու չունի եւ չգիտի ինչպես պաշտպանել սեփական իրավունքները, ինչ ասես՝ կարող են անել: Ես, իհարկե, սխալ եմ համարում Փաշինյանի քայլերը, սակայն սխալ են նաեւ այն քաղաքացիները, ովքեր թույլ են տալիս իրենց նկատմամբ նման քայլերի դիմել: Նիկոլ Փաշինյանի այս քայլերը մեկ բառով կարող ենք բնորոշել՝ ինքնիրավչություն: Փաշինյանն ինքնիրավչությամբ է զբաղվում: Հետագայում նրա դեմ շատ մեղադրանքներ են ներկայացվելու, այս մեկը կարող է նույնիսկ առաջին 50-ի մեջ տեղ չգտնել, սակայն որ այս արարքները հասնելու են դատարան՝ մեծ ցուցակով, դրանում վստահ եմ»:

ԴՕԿ-ը որոշել է Տարբերվել բոլորից՝ քարոզարշավ շանելով

Երեկ պարզեցինք, որ ԱՄՆ միգրացիոն բանտում գտնվող Վարդան Դուկասյանի ԴՕԿ կուսակցությունը, որն առաջադրվել է եւ կմասնակցի հունիսի 7-ի ընտրություններին, դեռ քարոզարշավը չի սկսել: Կուսակցության ներկայացուցիչ, ցուցակի 13-րդ համար **Նաիրա Գեւորգյանը**, որն ապահովում է կուսակցության կապերը մամուլի հետ, մեզ ասաց. «Քարոզարշավը նախատեսում ենք իրականացնել վերջին օրերին: Փորձում ենք այդպես տարբերվել բոլորից»: Հարցին՝ արդյո՞ք քարոզարշավ չանելը դրական արդյունք կտա, Գեւորգյանը պատասխանեց. «Գուցե: Մեր շտաբի պետ Լեւոն Բաղդասարյանը եւ Համահայկական ճակատի նախագահ Արսեն Վարդանյանը համատեղ աշխատում են եւ այդպես են որոշել: Չեմ կարող ասել, թե քարոզարշավն ինչպես կկազմակերպվի այդ ժամանակ, դեռ մենք էլ չգիտենք»: Հիշեցնենք, որ Լեւոն Բաղդասարյանը փաստաբան է, այս տարիներին զբաղվել է Վարդան Դուկասյանի նկատմամբ իրականացվող իրավական պրոցեսներում նրա պաշտպանությամբ, ապա նշանակվել է նրա շտաբի պետ եւ ընտրացուցակի առաջին համարն է: Անդրադառնալով դիտարկմանը, թե ինչպես, ինչ միջոցներով են իրականացնելու քարոզարշավը, եթե նախընտրական հիմնադրամում այս պահին 0 դրամ կա, Գեւորգյանը պատասխանեց, որ արդեն 0 դրամ չէ. «Երեկ արդեն գումար է նստել՝ 21 հազար դրամ: Ֆինանսական հարցերն էլ երեւի մոտ օրերս կկարգավորվեն»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՂԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ԱՎՏՈՒՎԱՑՄԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԿԵՏԸ ՉԵՆ ՓԱՎՈՒՄ



աշխատեցնում է: Բողոքողները տարակուսած էին, որ ապօրինի կառույցի տերը Դիլիջան համայնքի ավագանու անդամ է, որն ինքը պետք է պայքարեր համայնքում ապօրինությունների դեմ: Բնակիչներն ասում էին, որ Դավիթ Սարգսյանը 2020 թ. սահմանադրության հանրաքվեի (որը չկայացավ) ժամանակ գյուղում «կյո»-ի տեղի շտաբի ղեկավարն է: 2021թ. փետրվարի 19-ին Հաղարծինում հանդիպեցի Դավիթ Սարգսյանի եւ նրա եղբոր հետ: Նրանք գյուղում ավտոպահեստամասերի, շինանյութերի խանութներ ունեն եւ քարե բլրկների արտադրություն: Իսկ ավտովագման կետը կառուցված է Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհից վտանգավոր՝ 3-4 մետր հեռավորությամբ: Դավիթ Սարգսյանն այն ժամանակ ասաց, որ ավտովագման կետը գրանցված է եղբոր՝ անհատ ձեռներեց Սասուն Սարգսյանի անվամբ, ինքը բաժնետեր է: Կետը, իր ասելով, գործում է մեկուկես կամ երկու տարի, թեեւ գյուղացիներն ասում են, որ այն սարքվել է

Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք: Ապա Դավիթ Սարգսյանն ինձ ցույց տվեց Դիլիջան համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանի՝ 2019թ. օգոստոսի գրությունը, որով համայնքի ղեկավարը տեղեկացնում էր, որ իր առաջին իսկ պահանջի դեպքում ապօրինի կառուցված ավտովագման կետը պետք է բանդվի, քանի որ կառույցը Դիլիջանի համայնքապետի համապատասխան ակտի հիման վրա տեղադրվել է որպես ժամանակավոր ծածկ՝ առաջին իսկ անհրաժեշտության դեպքում ապամոնտաժելու պայմանով՝ ելնելով համայնքի գերակա շահերից: Համայնքի ղեկավարը նաեւ որոշում էր կայացրել ինքնակամ կառույց շահագործող անձին վարչական պատասխանատվության ենթարկել՝ տուգանելով 400 հազար դրամ:

2024 թվականի նոյեմբերին Նիկոլ Փաշինյանը պատմում էր, որ համայնքներից մեկում, երբ ինքը քայլել է, ավտովագման կետից քիչ է մնացել շուր պզզացնեն իր վրա: Թեեւ նա բնակավայրը չնշեց, սակայն խոսքը հայրենի Իջեւան քաղաքի մասին էր: Երեւանից հեծանվով Իջեւան գնացած Նիկոլ Փաշինյանը միջպետական ավտոճանապարհի եզրին, իր մոր կողմից պապի գյուղի՝ Հաղարծինի հարավային ծայրին չի տեսել անօրինական կառուցված ավտովագման այս կետը, որը պատկանում է իր համայնքապետին՝ Դավիթ Սարգսյանին: Եթե որեւէ մեկը հողի սողանքի պատճառով չգործող միջպետական ճանապարհին, գործող ճանապարհից 3-4 մետր հեռավորությամբ նման ապօրինի կետ սարքեր, այն վաղուց փակած կլինեին: Սակայն Դիլիջան համայնքի ղեկավար, ԶՊ կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանի ապօրինությունը չեն նկատում, եւ ավտովագման կետը շարունակում է շահույթ ապահովել բազում բիզնեսներ ունեցող այդ ընտանիքին:

Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի բնակիչները 2021թ. փետրվարին ինձ բողոքել էին, որ Հաղարծինի բնակիչ, Դիլիջան համայնքի ավագանու անդամ Դավիթ Սարգսյանը գյուղի հարավային ծայրին, գյուղը շրջանցող, սողանքի պատճառով չգործող միջպետական ավտոճանապարհին, ապօրինի կերպով, առանց շինթույլավորության ավտովագման կետ է կառուցել եւ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Քարոզարշավը մտավ միջազգային փուլ: Սկզբնական փուլից ստացած տպավորություններն թույլ են տալիս ասելու, որ թե՛ իշխանական եւ թե՛ ընդդիմադիր ուժերը գործում են բավականին համախմբված՝ չդավաճանելով յուրաքանչյուր իր սկզբունքներին ու ոճին: Դա հանգեցրել է քաղաքական դաշտի հստակ վիզուալ տարանջատման: Մի կողմում պետական ռեսուրսի ամբողջական գործադրմամբ վերարտադրվել փորձող Նիկոլն է՝ իր պարտությունների բեռով, տարատեսակ սատելիտներով ու կապիկոնյուն հիշեցնող քարոզչությամբ, մյուս կողմում՝ ընդդիմությունը, որ այս պահի դրությամբ երկու հիմնական խնդիր է լուծում՝ պարտության թմբիկից հանել հասարակությանը, մարդկանց մեջ արթնացնել հավատն արժանապատիվ ապագայի հանդեպ եւ, իհարկե, անխնա, առանց սեթեռնախնայի քննադատել իշխանությունների վարած քաղաքականությունն արտաքին եւ ներքին ճակատներում:

Քարոզարշավի մեկնարկն աչքի ընկավ նաեւ բեւեռներից յուրաքանչյուրի ասելիքի պաշարի եւ բովանդակության տարբերություններով: Մինչ Նիկոլը, ԶԳ-ն եւ սատելիտ ուժերը զբաղված են գործող իշխանության պարտություններն ու ճախողումներն ինչ-որ կերպ արդարացնելու, սրտիկներ ու ԶԳ ծառի քարտեզներ բաժանելու գործով, ընդդիմությունը խոսում է իրական ինքնիշխանության, հայկական ինքնության վրա հիմնված անվտանգ եւ մրցունակ պետության, հասարակության համերաշխության, համահայկականության, գիտելիքի դերի ու ստեղծագործ աշխատանքի մասին: Իշխանության քարոզչա-

կան խոսույթը կիրմետրերով հեռու է պետությանը հարիր խոսույթից, մինչդեռ ընդդիմությունը խոսում է պետության ու պետականության լեզվով:

Ինչ սպասել քարոզարշավի 2-րդ տասնօրյակում: Սա այն ժամանակահատվածն է, երբ հանրությունը սկսում է ուշիուշով ծանոթանալ ոչ այնքան վարչապետի թեկնածուներին, որքան՝ նրանց թիմերին: Այս իմաստով լուրջ քննություն է սպասվում հատկապես ցուցակների առաջին 20-30 տեղերում ընդգրկված թեկնածուներին, կարելի էր ասել նրանց հետ կապված բոլոր հիշողությունները:

Փաշինյանի քաղաքական թիմի մասին շատ բան չկա ասելու: Հանրությանը քաջածանոթ ապագային խայտառակությունների շարան է դա, որտեղ մեկը մյուսի հետ մրցում են իրենց հակահայկականությամբ, թրջամետություններով եւ ադրբեջանամետությամբ: Ես դեռ չեմ խոսում այս ցուցակի խմբակային հանցագործությունների մասին, որոնք առանձին քննարկման թեմա են դառնալու ընտրություններից հետո: Սա հենց այն ցուցակն է, որի 2-րդ համարից մինչեւ վերջինը հարցաքննվելու են Նիկոլ Փաշինյանի բերած աղետների բազմախտոր քրոնոսով: Պարզ է, չէ՞, որ Նիկոլը միայնակ չէր կարող ոչինչ անել, եթե նրա հետ չլինեին Արարատ Միրզոյանը, Սուրեն Պապիկյանը, Արայիկ Զարուբյանը, Ալեն Սիմոնյանը, Ռուբեն Ռուբինյանը, Արսեն Թորոսյանը, Վահագն Ալեքսանյանը, Հայկ Կոնջոբյանը... մյուսները: Տիգրան Ավինյանը, ճիշտ է, համեստագույն 31-րդ հորիզոնականն է զբաղեցնում, բայց նա էլ չի խուսափելու պա-

տասխանատվությունից, որովհետեւ Նիկոլի կաբինետում մի ժամանակ փոխվարչապետ է աշխատել:

Արժե՞ երկու խոսք ասել ԶԳ-ի սպասարկու ուժերի, օրինակ՝ ազգային խայտառակություններ Արման Բաբաջանյանի եւ Լեւոն Շիրինյանի ցուցակների մասին: Անուն-ազգանուններ են այնտեղ, որոնք ոչինչ չեն ասում հանրությանը: Նույնը Արամ 2. Սարգսյանի ցուցակի մասին կասեմ, որ պատրաստվում է ոչ միայն խորհրդարան անցնել, այլեւ կոալիցիա կազմել ազգադավ ԶԳ-ի հետ: Պարզապես հիշեցնեմ մեր հայրենակիցներին, որ Նիկոլի սպասարկու ուժերը եւս մեղքի իրենց բաժինն ունեն՝ Հայաստանը շունուշանգայի ոտքի տակի շոր դարձնելու գործում:

Հանրությունն այս օրերին, իմ կարծիքով, ավելի շատ կենտրոնացած է լինելու ընդդիմության ցուցակների վրա, որոնք իշխանական ցուցակից առաջին հերթին առանձնանում են հասարակական տարբեր խավերի, տնտեսության ու գիտության տարբեր ոլորտների ընդգրկմամբ, փորձի եւ երիտասարդության հստակ համամասնությամբ եւ, իհարկե, քաղաքական ճիշտ հաշվարկով: Հանրությունը թե՛ «Ուժեղ Հայաստանի», թե՛ «Հայաստան» դաշինքի, թե՛ ԲՀԿ-ի, թե՛ «Միասնության թեւերի» ցուցակներին ծանոթանալիս, վստահ եմ, բազմաթիվ հետաքրքիր բացահայտումներ է անելու, եւ հենց դա էլ, գուցե, ընտրություններով իր կյանքը փոխելու չհավատացող մեր շատ քաղաքացիներին հունիսի 7-ին կտանի ընտրատեղամասեր:

Եթե քարոզարշավի 2-րդ տասնօրյակում Փաշինյանին չհաջողվի իր թիմով գերել հասարա-

կությանը, իսկ դա գրեթե անհնար է, ապա նա վերջնագծում կհայտնվի կատարյալ ֆիասկոյի շեմին: Ընդդիմությունն այդ օրերին, միանշանակ, սաստկացնելու է քննադատությունը, լինելու են նորանոր բացահայտումներ Նիկոլի եւ նրա օտար «գործընկերների» հակահայկական պայմանավորվածությունների մասին: Հենց այդ օրերին է սպասվում, որ Նիկոլի թուրք եւ ադրբեջանցի քիթվաները «բարի կամքի» ժեստեր կցուցադրեն՝ մեր հանրությանը սուտ խաղաղության հետեւից տանելու համար, բայց թե որքանով դա կնպաստի Նիկոլի հեղինակության բարձրացմանը, դժվար է ասել: Մեր հանրության համար մի բան հստակ է՝ Փաշինյանը վաղուց հարց լուծող չէ, կատարող է, ու եթե օտարն էլ նրա համար մի բան է անում, ապա միայն նրա հերթական գիշման, հերթական հակահայ քայլի դիմաց:

Քարոզարշավի վերջին փուլում ուժերի հարաբերակցության

ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՄՈՒԹՆ ՈՒ ԼՈՒՅՍԸ

սոցիալոգները, անշուշտ, բոլորովին այլ պատկեր են ցույց տալու: Իշխանությունը շարունակելու է կորցնել, իսկ ընդդիմությունը՝ ավելացնել: Այլ ռեսուրս չունենալով՝ Փաշինյանը կփորձի եվրոպացիներ խաղացնել, եվրոներ ցույց տալ իր ընտրազանգվածին, ինչին, բնական է, կհետեւեն Ռուսաստանի պատժամիջոցները, որոնք, սովորաբար, ավելի արագ են տեղ հասնում, քան՝ եվրոները: Համատարած են անտանելի թանկացումը Նիկոլի ընտրազանգվածին կստիպի երկու անգամ մտածել՝ սոցիալոգները պատասխանելուց առաջ:

ՀՈՒՄՈՐ



Էդիկ ԱՆՂԵԱՅԱՆ
edik.andreasyan
@hraparak.am

Աժ պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովն ավելի շատ ռուս է, թե՛ ԶԳ-ական: Փաշինյանը պլանավորված փչացնում է Ռուսաստանի հետ հարաբերությունները, Հայաստանը միացնում է Ռուսաստանի դեմ պատերազմող հակառուսական արեւմտյան դաշինքին, Հայաստանի մասնակցությունը ՀԱՊԿ-ին սառեցված է, ԵԱՏՄ-ին անդամակցությունը՝ կասկածի տակ, իսկ Սանդիկովը պաշտպանում է փաշինյանական քաղաքականությունը: Անդրադառնալով ՌԴ նախագահի հայտարարությանը, որ Հայաստանը պետք է արագ կողմորոշվի ԵԱՏՄ-ին անդամակցության հարցում, նա ասում է. «ՀՀ լեգիտիմ, ժողովրդի կողմից ընտրված վարչապետը մեր հարգարժան, սիրելի ՌԴ նախագահին պարզ լեզվով ասել է, որ մենք համատեղելու ենք այնքան, որքանով դա ձեռնտու է ՀՀ-ին, եւ որքանով մեկը մյուսին չի խանգարում»: Սանդիկովը ՌԴ նախագահին անհասկացող, մտավոր հետամնաց է անվանում, այլ կերպ չես բացատրի, որովհետեւ, եթե մարդուն պարզ լեզվով բան ես ասում, իսկ նա շարունակում է իրենը պնդել, ասում է՝ չէ՞ կարող այլեւս ժամանակ ձգել, պետք է արագ կողմորոշվե՞ք, նշանակում է՝ այդ մարդը հասկացողության հետ խնդիր ունի՝ առնվազն դիմացինի ընկալմամբ:

Փաշինյանի տված այս տնային առաջադրանքն անգիր սովորել ու կրկնում են բոլոր ԶԳ-ականները,

բայց Սանդիկովի դեպքն արտառոց է նրանով, որ նա ՀՀ ԱԺ-ում ներկայացնում է Հայաստանում ռուսական համայնքը եւ պետք է պաշտպանի այդ համայնքի շահերը, որոնք ենթադրում են Հայաստանի եւ Ռուսաստանի բարեկամություն, ոչ թե՛ թշնամություն: Սանդիկովը պետք է դեմ լինի Հայաստանի՝ հակառուսական դաշինքին միանալու փաշինյանական քաղաքականությանը, բայց եթե դեմ լինի, այդ դեպքում Փաշինյանը նրան չի տանի ԱԺ, եւ նա պատգամավորական աշխատավարձ, պարգեւավճար չի ստանա, պետության հաշվին չի շրջագայի, ուստի նա իրեն դրսեւորում է իբրեւ շարքային ԶԳ-ական՝ սկզբունքներն ու արժեքները ստորադասում է փողին եւ անձնական շահին:

«Մինչեւ ես պահը, երբ ընտրություն կատարելու անհրաժեշտություն չի լինի դե յուրե եւ դե ֆակտո, նման հարց օրակարգում չենք դնի: Ես համաձայն չեմ նաեւ «ապահարզան» ձեւակերպման հետ, միջպետական հարաբերությունները երբեմն շփոթում ենք մոմսնության հետ: ՀՀ միջպետական հարաբերություններում առաջնորդվում է միջպետական տրամաբանությամբ, եւ մենք ԵԱՏՄ լիիրավ անդամ ենք ու քանի դեռ անդամ ենք, լիարժեք մասնակցում ենք որոշումների կայացմանը», Սանդիկովի միտքը, մի փոքր այլ ձեւակերպմամբ, ասել է Փաշինյանը, որն իր հերթին ՌԴ նախագահին միջպետական եւ ընտանեկան հարաբերությունների դաս է տվել՝

КУДА РОССИЯ ДЕНЕТСЯ БЕЗ АРМЕНИИ?

բացատրելով, որ դրանք տարբեր հարթություններ են, դրանք պետք չէ շփոթել: Ինչպես գիտեք, Փաշինյանը միջպետական եւ ընտանեկան հարաբերությունների խոր գիտակ եւ միջազգայնորեն ճանաչված մասնագետ է:

Ապահարզան ասելով՝ Վլադիմիր Պուտինը նկատի ուներ Հայաստանի բաժանումը ԵԱՏՄ-ից, իսկ Փաշինյանը մեծ հաշվով ասում է, թե՛ դուք չէ, որ պետք է որոշեք՝ մենք լինե՞նք ԵԱՏՄ-ում, թե՛ ոչ, քանի դեռ մեզ ձեռնտու է մնալ, կմնա՞ք, երբ որոշեք դուրս գալ, այդ ժամանակ էլ դուրս կգանք, Պուտին, դու քեզ հանգիստ պահիր: Որտեղից է գալիս Փաշինյանի այս վստահությունը: Հնարավոր է, որ նա ունի ինչ-որ պայմանավորվածություններ, որոնց մասին առայժմ չի խոսում:

Ռուսաստանը կարող է ԵԱՏՄ բարձրագույն խորհրդի նիստում, որը կայանալու է մայիսի 28-29-ին, Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում, դնել Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցության հարցը: Բայց նույնիսկ եթե մի կողմ թողնենք այն հարցը, որ Հայաստանը, լինելով կազմակերպության հիմնադիր անդամ, ունի խոսքի իրավունք, հնարավոր է, որ Հայաստանին կազմակերպությունից հեռացնելու գաղափարին դեմ դուրս գա նաեւ Ղազախստանը, մի երկիր, որի իշխանությունը, Հայաստանի նման, գտնվում է Արեւմուտքի ազդեցության

տակ, սակայն տնտեսական եւ աշխարհագրական պատճառներով չի ուզում խզել կապերը Ռուսաստանի հետ: Հնարավոր է, որ Փաշինյանը Ղազախստանի նախագահի հետ ունի բանավոր պայմանավորվածություն, որ երբ դրվի Հայաստանի՝ կազմակերպությունից հեռացնելու հարցը, Ղազախստանը դեմ լինի այդ գաղափարին, այն հիմնավորմամբ, որ Հայաստանը գոնե ֆորմալ առումով որեւէ բան չի արել, որը հակասում է ԵԱՏՄ կանոնադրությանը, որը հիմք տա՝ նման հարց քննարկելու, եւ այդ դեպքում Ռուսաստանին այլ բան չի մնա, քան հրաժարվել հարցի քննարկումից, որովհետեւ առճակատում միաժամանակ երկու պետության հետ կասկածի տակ կոնի կազմակերպության գոյությունը:

Իսկ փաշինյանական ռազմավարությունն այս հարցում հետեւյալն է. հիմա Ռուսաստանը փորձում է ճնշում գործադրել գործող վարչախմբի վրա, որ հայ հասարակությանը կողմորոշի դեպի այն ուժերը, որոնք Ռուսաստանի հետ հավասարակշռված հարաբերություններ կառուցելու կողմակից են, բայց եթե իրենց հաջողվի վերարտադրվել, բռնազավթած պահել իշխանությունը, ՌԴ իշխանությունները ստիպված կլինեն համակերպվել փաստի հետ եւ, պատժամիջոցներ սահմանելու փոխարեն, կշարունակեն համագործակցել, ու ամեն ինչ կլինի այնպես, ինչպես հիմա է: Куда Россия денется без Армении?



Վլենտին ԲԱԲԱԶՆԱՅԱՆ

Երկու շառաչուն ապտակ, եւ 8 տարում երկիրը կործանման եզրին հասցրած առաջնորդի աչքերը բացվեցին: Առանձնատան հաստ վարագույրից ներս խաղաղություն էր: Դրսում ժողովուրդը կառավարության դարպասներն էր ցնցում: Ճակոտաց, Նայեց հայելու մեջ, շտկեց բացակայող մազերը, հանգստացավ՝ լավ է... դեմքը

թոյանի կոչով ժողովուրդը փողոց է դուրս եկել:

- Էդ նրանց խելքի բանը չի՝ Պուտինն է հուշել: Բայց ժողովուրդս ինչո՞ւ է փողոց լցվել... Վան եմ պահում, արձանագրենք. թռչակները՝ 16-ից 46 հազար, անվճար առողջապահություն, դեղորայք, Ադրբեջանից բենզին, խաղաղություն, երգուպար, վարչաբեռ, գուռնադիոլ, սրտիկներ, խոստումներ... Խելք, սթրված ապրում էին, ինչ պատահեց, հառանչեց առաջնորդը:

Լրտեսը հայտնեց ահավոր նորությունը՝ ռուսները գազի գինը երկինք հանեցին՝ 1 խմ-ն՝ 600 դոլար: Ժողովրդի համբերության բաժակը լցվել է, մարդիկ էլ փողոց են լցվել:

- Ելք մեկն է,- շարունակեց լրտեսը.- Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, եղբայր Իլհամ Ալիևը եթե մեզ գազ տան, կփրկվենք: Վարչապետը հոգոց հանեց.

- Իմ եղբայրների ներսում էնքան գազ կա՝ չեն ինչայի: Ափսոս, որ Ֆրանսիայից, Ադրբեջանից Յալաստան գազատարներ չկան: Ոստի-

- Զաղաբակասության մեջ օգտագործվելն արդեն իսկ հաջողություն է,- եզրափակեց վարչապետն ու հրամայեց ԶՊ-ականներին ԱԺ նիստի հրավիրել:

«ԱԺ չկա, ԶՊ խմբակցությունը ցանուցիր եղավ անհայտ ուղղություններով»,- տեղեկացրեց լրտեսը:

- Էդ դեպքում՝ ինձ նվիրված գործարարներին կանչիր՝ մի բան մտածենք:

- Նրանք էլ չկան՝ «Զերմուկը», կոնյակը Ռուսաստանը չի ընդունում, Յուլանդիայից բերված ծաղկի ու հայկական գյուղմթերքների դեմը փակել են, գործարարները էլ մեծ փողեր են կորցրել՝ մեղքը քո վրա են բարդել ու հիմա փախեփախի մեջ են:

- Աննայիս կանչիր: Լրտեսը նրան հանձնեց Աննայի նամակը. «Վերջապես հեռանում եմ վերջնականապես: Ինձ չփնտրես: Զո Աննա»:

Վարչապետը մտածմունքի մեջ ընկավ: Հանձնարարեց կանչել խոհարարին: Սիրտը չինական սունկ ուզեց: Գիտե՞ր՝ կառույցագնի: Խոհարարը ես փախել էր: Իջան չուլան, պարկերից չեփած սունկ հանեցին բերեցին՝ կերավ, քունքերը թրթռացին: Ուղեղը բոցկտաց: Մտքերի հեղեղ, բառերի պոռթկում սկսվեց: Փակեց աչքերը՝ իրեն սիրուց խենթացած ամբոխի առջեւ զգաց...

Ճառում է. «Ապագա կա... Արցախը Հայաստան է, եւ վերջ... Հաղթանակը մերն է... Նոր հարձակում, նոր տարածքներ... Տարածաշրջանի ամենամարտունակ բանակը մերն է... Պարտվենք էլ՝ մեզ պարտված չենք ճանաչելու... Մեր հողերով թշնամու բերանը կծեփենք... Հետ եմ բերելու Շուշին ու Հաղորթը»:

Ապա՝ Էմոցիոնալ դողերոցքի մեջ, վերցրեց բարձրախոսն ու առանձնատանից դուրս նետվեց: Լրտեսը ծառերի տակ հազիվ բռնեց՝ եւ ձր, Նիկոլ:

- Ժողովրդիս մոտ... Ելույթ ունենամ՝ դարձի բերեմ, համագեմ, որ լուսավոր ապագան եկել է, իրենք էլ ընտիր ապրում են...

- Բանը բանից անցել է,- ձեռքն ուսից չհեռացնելով՝ ասաց լրտեսը,- դու էլ քո ճարը տես:

- Ինքնաթիռիս ո՞նց հասնեմ... փողոցներում ժողովուրդը ցեպ տված է... Լավ է՝ իջնեմ ժողովրդիս մեջ, իմ դայրի մի երկու խոսք ասեմ, Նիկոլականները կպաշտպանեն...

- Նիկոլական չկա... Դու՝ մերժված, ԶՊ-ականները՝ թալանչի, Նիկոլասերները՝ յալանչի... Արի՞ թեզ կնոջ շոր հագցնեմ, ակնոց դնեմ, հեծանիվը նստես՝ հայրե՛ թուրքիս: Նիկոլը սթափվեց.

- Եղբայր, իսկ դու ինձ ինչի՞ ցես լթում:

Լրտեսը պատասխանեց.

- Ես իմ հայրենասիրական պարտքն եմ կատարում:

- Եթե հայրենիքդ ես եմ, օգնիր՝ հեծանիվս հեծնեմ:

Եվ հանկարծ ինչ-որ բան հիշեց.

- Եղբայր ջան, Ֆրանսիայի միապետ Լյուդովիկոսին չէր, եսիմոր դարում, Ֆրանսիայի սահմանը հատելիս բռնեցին...

- Շեֆ, հանգիստ, թեզ գիլիոտինի չեն ենթարկի... Հայաստանում մահվան դատավճիռ վաղուց չկա: Կդատեն, ցմահ կտան՝ ցմահ կապրես,- հանգստացրեց լրտեսը:

Թուրքիայի սահմանի մոտ ճանաչեցին, ասֆալտին չփռեցին, ուղիղ Ազատության հրապարակ բերեցին: Նա գրպանից հանեց ու կուլ տվեց եւս մի բուռ հայուցիկացի ուսուկ, ապա մի կողմ իրեց ելույթ ունեցողին ու բղավեց.

- Արձանագրենք՝ ես ձեզ արցախյան ծուղակից ազատեցի, ինքնիշխանություն բերեցի, այդ ամբողջը՝ խաղաղության տրամաբանության մեջ... Ինչ էլ անեք, ես ինձ պարտված չեմ ճանաչելու: Ես ցմահ վարչապետ եմ:



ԵՍ ՑՄԱՆՎԱՐՉԱՊԵՏ ԵՄ ԼԻՆԵԼՈՒ

պետական է: Ելի տորրեց աչքերը: Գլխավերելում անձնական լրտեսի վախճորած դեմքը երեսաց՝ «Վեր, տնաբանդ, ես ինչ արեցիր»,- գոռաց նա: Զհասկացավ՝ ինչու է գոռում, ճիշտ է՝ տնաբանդը տնաբանդ է, ինչ անում է՝ մի բան «բանդվում» է, դա նոր բան չէ, բոլորը գիտեն, հիմա ինչ են ուզում իրենից: Փողոցից վանկարկումների ձայն է լսվում. «Նիկոլ, հեռացիր»: Ժպտաց. «Ժողովուրդս սիրում է ինձ: Երբ մարդուն առում են, անունը չեն կրկնում»:

- Մի խումբ կուսակցություններ համատեղ հանրահավաք են անում,- տեղեկացրեց լրտեսը,- Սամվել Կարապետյանի, Ռոբերտ Զոչարյանի, Գագիկ Ծառուկյանի, Արման Թա-

կաններս ինչ բանի են, երախտամոռներին թող դաս տան: Փողոց հանեք...

- Փողոցում են՝ ժողովրդի հետ, ժողովրդի կողքին:

- Դա ապացուցում է, որ ժողովրդին ոստիկանությունից չենք բաժանել: Ինչն ինքնին խոսում է ժողովրդավարության մասին: Ալիևը, Էրդողանը տեղյա՞կ են: Լրտեսը գաղտնի հաղորդագրությունը մեկնեց նրան. «Նիկոլ, շտապիր՝ ԱԺ-դ հավաքիր, Սահմանադրություն փոխիր, միջանցքը տուր»: Կարդաց բարձրաձայն, ասաց. «Տեսար, միջազգային աջակցություն ունեմ»: Լրտեսն առարկեց. «Ձեզ չեն աջակցում, ձեզ օգտագործում են»:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, գանգեք մեզ 011 (55,94) 52 66 70, info@hraparak.am Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵ ՀԱՅՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսա Ստեղ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01



հրապարակ

Գլխավոր խմբագիր թողարկման պատասխանատու Արմինե Օհանյան info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 13.05.2026թ., տպագրվել է «Գիկո» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՈՒԺԵՂ ԵՎ ՆԳՈՐ ՆԱՅԱՍՏԱՆ ԼԻՆԵԼՈՒ Ե ԲՈՒՈՐ ԳԵՊԵՐՈՒՄ



Ինչպես երեւում է թափ հավաքող նախընտրական քարոզարշավից, մյուս բոլոր քարոզարշավների նման, այս քարո-

զարշավում եւս մասնակցող ուժերը փորձում են բանն այնպես ներկայացնել, թե իբր Հայաստանի համար այս ընտրությունների խնդիրը ոչ թե հզոր Հայաստանին հասնելու ճանապարհը կրճատելն է, այլ Հայաստանի լինել կամ չլինելու միջեւ ընտրելը:

Այնինչ, իրականությունն այն է, որ Հայաստանի համար այս ընտրությունների խնդիրը ոչ թե Հայաստանի լինել կամ չլինելու միջեւ ընտրություն կատարելն է, այլ՝ հզոր Հայաստանին հասնելու ուղին կարճացնելը: Այս իմաստով, Հայաստանի՝ առանց Նիկոլ լինելու կարելիությունը ոչ թե Հայաստանի լինել-չլինելուն, այլ հզոր Հայաստանի երկար, թե կարճ սպասելուն է վերաբերում:

Տեսե՛ք՝ եթե այս ընտրությունները լուծեն Նիկոլին հեռացնելու հարցը, ուրեմն ուժեղ եւ հզոր Հայաստանին ավելի շուտ կհասնենք, չեն լուծի այդ հարցը, ուրեմն ստիպված կլինենք ուժեղ եւ հզոր Հայաստանի գալուն ավելի երկար սպասել: Միակ հարցը, որը չի լուծվում այս ընտրություններում, դա, թերեւս, Հայաստանի լինել-չլինելու հարցն է: Այդ հարցն այս ընտրություններում չի լուծվում, որովհետեւ վաղուց արդեն լուծված է: Այսօրվա ու այս ընտրությունների հարցը ոչ թե Հայաստանի չլինելուն, այլ նրա ուժեղ եւ հզոր լինելուն վերաբերող հարց է:

Այս իմաստով, այնքան, ինչքան սխալվում են Նիկոլենք, երբ պնդում են, թե իբր եթե Նիկոլը չլինի վարչա-

պետ, Հայաստանը վարչապետ չի ունենա, նույնքան էլ սխալվում են նրանք, ովքեր գտնում են, որ եթե Նիկոլը մնա վարչապետ, ուրեմն Հայաստանը չի լինի:

Իհարկե, Նիկոլը պետք է հեռանա, բայց պետք է հեռանա ոչ թե այն պատճառով, որ եթե մնա, ապա Հայաստան չի լինի, այլ պետք է հեռանա, որովհետեւ իր մնալով հզոր Հայաստանին հասնելու է երկար տեւելու: Իհարկե, պետք է գա ընդդիմությունը եւ հատկապես այն ընդդիմությունը, որը երկրի տնտեսության արդյունաբերականացմամբ շահագրգիռ եւ համազգային համերաշխության մտահոգ ընդդիմությունն է, բայց պետք է գա ոչ թե նրա համար, որ եթե չգա, ապա Հայաստանը չի լինի, այլ պետք է գա, որպեսզի հզոր Հայաստանին հասնելու ավելի կարճ տեւի:

Գայուստ ԱՍՐԳՅԱՆ